ՀՌՈՄԻ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ ՊՐԻՆՑԻՊԱՏԻ ԿԱԶՄԱՎՈՐՄԱՆ ՇՐՋԱՆՈՒՄ
(պարբերացման փորձ)

Ա. Է. ԽԱՉԻԿՅԱՆ

Պրինցիպատի կազմավորման շրջանում Հռոմի արևելյան քաղաքականության ուսումնասիրությունը, այդ քաղաքականության ստրատեգիական նպատակների իմաստավորումը, իրականացման տակտիկական ձևերի ու մեթոդների բացահայտումը և զարգացման փուլերի որոշումը կարևոր նշանակություն ունեն Հայաստանի մ. թ. ա. I դ. վերջի—մ. թ. I դ. առաջին կեսի պատմության ուսումնասիրության համար։

Հռոմի արևելյան քաղաքականության ուսումնասիրությանը և դրա պարբերացմանն իրենց աշխատություններում անդրադարձել են Թ. Մոմզենը, Ն. Դեբրվոյսը, Դ. Մեյջին, Կ. Ցիգլերը, Ա. Գարագաշյանը, Հ. Աստուրյանը, Հ. Մանանդյանը[1] *և ուրիշներ։ Նշված աշխատությունների ընդհանուր թերությունը պետք է համարել վառ արտահայտված ռոմանոցենտրիզմը, երբ անտեսվում է Հռոմի արևելյան քաղաքականության ագրեսիվությունը և Հռոմի հետ առնչվող մյուս բոլոր պետությունները դիտվում են քաղաքական ակտիվությունից զուրկ և ներկայացվում լոկ որպես հռոմեական քաղաքականության օբյեկտներ։ Նման մոտեցման դեպքում, բնականաբար, Հռոմի արևելյան քաղաքականության պարբերացման հիմքում գրվում են միայն հռոմեական պատմության արմատական իրադարձությունները, իսկ ավելի հաճախ՝ լոկ սուբյեկտիվ գործոնները, օրինակ՝ կայսրերի և նրանց շրջապատի փոփոխությունները։ Այս իսկ պատճառով հռոմեական կայսրերի կառավարման տարիները դիտվում էին որպես Հռոմի արևելյան քաղաքականության փուլեր։*

Մեր կարծիքով պրինցիպատի կազմավորման շրջանում Հռոմի արևելյան քաղաքականության մեջ տեղի ունեցող նշանակալից փոփոխությունները պայմանավորված էին հիմնականում օբյեկտիվ պատճառներով, մասնավորապես Պարթևստանի հետ շղթադրող մրցապայքարով։ Ընդ որում, Հռոմի արևելյան քաղաքականությունը պայմանավորող առավել կարևոր գործոններից էր հայ ժողովրդի (և Առաջավոր Ասիայի մյուս ժողովուրդների) պայքարը անկախության համար։

Ուսումնասիրվող հարցին վերաբերող աղբյուրները սակավաթիվ են։ Դեպքերի կապակցված շարադրանքը տալիս են հիմնականում Տակիտոսը և Դիոն Կասիոսը։ Նրանց հաղորդումները զգալիորեն լրացնում են Սվետոնիուսը, Վելեոս Պատերկուլոսը, Ցիցերոնը, Հովսեփոս Փլավիոսը, Ստրաբոնը և Մովսես Խորենացին։

Հռոմեական տերության արևելյան քաղաքականությունն Առաջավոր Ասիա նրա ներթափանցման սկզբից իսկ բնորոշվում է ռազմադիվանագիտական ակտիվ գործունեությամբ՝ ուղղված այդ շրջատարածքում իր անբաժան տիրապետության հաստատմանը, տնտեսապես զարգացած և ստրատեգիապես

---

1 *Հ. Աստուրյան, Քաղաքական վերաբերություններ ընդմեջ Հայաստանի և Հռոմայ, Վենետիկ, 1912, Ա. Գարագաշյան, Քննական պատմություն Հայոց, Բ մաս, Թիֆլիս, 1895, Հ. Մանանդյան, Երկեր, հ. 8, Երևան, 1977,* Т. Моммзен, История Рима, т V. М., 193?; N. Debevoise. A political history of Parthia, Chicago, 1938; D. Magie. Roman rule in Asia Minor, Princeton, 1950; K. Ziegler, Die Beziehungen zwischen Rome und dem Parthereich, Wiesbaden, 1964.

կարևոր տարածքների աստիճանական բռնազավթման միջոցով։ Առաջավոր Ասիայի պետություններին ու ժողովուրդներին ցույց տված տևական և ուժեղ դիմադրությունը Հռոմին հարկադրեց նվաճված տարածքների պաշտպանությունը կազմակերպել սահմանապահ կախյալ պետությունների միջոցով, որոնք հայտարարվում էին «amici populi romani»* «բուֆերի» դեր կատարելով Հռոմի և նրա հակառակորդների միջև։ Հռոմի տիրույթներն Արևելքում, այսպիսով, տարաբաժանվում են «ուղղակի (անմիջական) տիրույթների» և «քաղաքականապես վերահսկվող (կախյալ) տարածքների»։ Արևելքում հռոմեական սահմանների ընդլայնման դժվարությունն ու տևականությունը այս երևույթը վերածեցին համակարգի, որը խորապես արմատավորվեց Հռոմի արևելյան քաղաքականության մեջ։

„Amicus populi romani" քաղաքական բանաձևը հռոմեացիների համար միանշանակ չէր։ Կախված հանգամանքներից, կոնկրետ քաղաքական իրադրությունից և ուժերի փրկական հարաբերակցությունից, այն կարող էր նշանակել. ա) Հռոմեական շահերի աջակից և պաշտպան, ինչպես նաև ընդհանուր թշնամու դեմ պայքարում Հռոմի օգնությունն ու հովանավորությունը վայելող դաշնակից։ բ) Կախյալ թագավորություն կամ տարածք, որում Հռոմն ուժեղ տնտեսական դիրքեր էր ձեռք բերում, ստեղծում սոցիալական հենարան և ժամանակի ընթացքում կլանում երկիրը քաղաքականապես՝ վերածելով պրովինցիայի։

„Amicus populi romani" հասկացության այս երկիմաստության շրջանակներում էլ հենց որոշվում էր Հռոմի իրական վերաբերմունքն իր «դաշնակիցների» նկատմամբ՝ ամեն մի կոնկրետ դեպքում։ Իր ագրեսիվ քաղաքականության մեջ բախվելով որևէ խոշոր տերության, Հռոմը «բարեկամական» հարաբերություններ էր հաստատում նրան դիմակայող փոքր պետությունների հետ, ամեն կերպ վերջիններիս օժանդակելով և ուժեղացնելով, նկատի ունենալով նրանց օգնությունն առաջիկա ընդհարումներում։ Պատերազմում հաղթելով իր գլխավոր հակառակորդին, Հռոմը չէր փորձում անմիջապես զավթել նրա տարածքը, զգուշանալով ժողովրդական զանգվածային ելույթներից, այլ մասնատում և թուլացնում էր պարտվածին, նրա կորուստների հաշվին պարգևատրելով իր «դաշնակիցներին»։ Հետագայում, երբ գլխավոր հակառակորդը Հռոմի նմանօրինակ խարդավանքների հետևանքով թուլանում և այլևս ռազմական վտանգ չէր ներկայացնում, այն հռչակվում էր Հռոմի նոր «դաշնակից և բարեկամ» ստանձնելով «բուֆերի» դեր՝ հերթական հակառակորդների հետ Հռոմի մղելիք պայքարում։ Միաժամանակ, վերանում էր նախկին «դաշնակցին» օժանդակելու անհրաժեշտությունը, և վերջինս իրավահավասար կողմից վերածվում էր կախյալ պետության։ Այդ ժամանակից Հռոմը սկսում էր նման պետությունում ուժեղացնել իր տնտեսական դիրքերը, վերջինիս քաղաքականապես թուլացնել, խառնվել նրա ներքին գործերին, զահից զրկել իրեն ոչ ձեռնտու կառավարողներին, թագավոր հռչակելով իր դրածներին։ Սովորաբար, որոշ ժամանակից հետո, երկիրը վերջնականապես «հասունանում» էր՝ Հռոմեական տերությանը որպես պրովինցիա միացվելու համար։

Քանի որ ժամանակագրական առումով առաջին վիճակը սովորաբար նախորդում էր երկրորդին, ապա պետք է կարծել, որ „amicus populi romani" ձևակերպումն անցնում էր իմաստավորման երկու աստիճան. 1-ին աստիճան՝ իրավահավասար կամ համարյա իրավահավասար «դաշնակից», 2-րդ աստիճան՝ կախյալ կամ կիսակախյալ «դաշնակից»։

Գործելով „devide et impera" («Բաժանիր, որ տիրես») սկզբունքի համաձայն, Հռոմը, բարեկամական հարաբերություններ հաստատելով Պարթևստանի հետ, Լուկուլլոսի և Պոմպեոսի արշավանքների շնորհիվ իր վերահսկողությունը հաստատեց Հայաստանի նկատմամբ։ Ըստ մ. թ. ա. 66 թ.

* Հռոմեական ժողովրդի բարեկամ։

կնքված հայ-հռոմեական պայմանագրի, Հայաստանը վերածվեց Հռոմի համարյա իրավահավասար «դաշնակցի»՝ պահպանելով իր ներքին ինքնուրույնությունը և զինված ուժերը, լոկ իր արտաքին քաղաքականությունը ենթարկելով Հռոմի շահերին[2]։

Արևելքում Պոմպեոսի հաստատած քաղաքական համակարգում Հայաստանին առանձնահատուկ դեր էր հատկացվում։ Շարունակելով մնալ Պարթևստանից հետո արևելքում հզորությամբ երկրորդ պետությունը, այն պետք է զսպեր դեպի արևմուտք ձգվող՝ հռոմեական տիրույթները, Պարթևստանի հնարավոր ոտնձգությունը։

Սկսած այս ժամանակից և մինչև Օգոստոսի իշխանության հաստատումը, Հայաստանը ժամանակավորապես դադարեց Արևելքում հռոմեական ագրեսիայի ուղղակի օբյեկտը լինելուց։ Նման օբյեկտ նշված ժամանակաշրջանում հանդիսանում էր Պարթևական տերությունը։ Դա օբյեկտիվորեն բխում էր հանրապետության վերջին տասնամյակներում Հռոմի արևելյան քաղաքականության զարգացման ագրեսիվ ընթացքից։ Քանի դեռ Հռոմը չէր կլանել Կապադովկիայի, Պոնտոսի, Գալաթիայի, Կոմագենեի և Կիլիկիայի կախյալ թագավորությունները, իսկ Պարթևական տերությունը չէր հարկադրվել դառնալ Հռոմի «դաշնակից և բարեկամ», չէր կարող փոխվել և Հայաստանի կարգավիճակը։

Հռոմի արևելյան քաղաքականության հաջորդ խնդիրն էր իր գերիշխանությանը ենթարկել Պարթևստանը, ինչը հնարավորություն կտար ժամանակի ընթացքում կլանել և Հայաստանը։ Հենց այս էր Կրասոսի և Անտոնիոսի պարթևական արշավանքների նպատակներից մեկը, որոնք, սակայն, ցանկալի արդյունք չտվեցին։ Պարթևստանը, Հայաստանի հետ դաշնակցած, պաշտպանեց իր անկախությունը, դրանով ուժեղ հարված հասցնելով հռոմեական առաջխաղացմանն արևելքում։ Շնորհիվ Պարթևստանի հետ դաշինքի, Հայաստանն Արտաշես II-ի կառավարման շրջանում վերականգնեց իր անկախությունը։

Հռոմեական տերությունում ներքաղաքական պայքարի ավարտը և Օկտավիանոս-Օգոստոսի պրինցիպատի հաստատումն արմատապես փոխեցին Հռոմի արևելյան քաղաքականության նպատակները։ Թե՛ հասարակական և թե անձնական շահերից ելնելով, Օգոստոսը հրաժարվեց Արևելքը նվաճելու գաղափարից, հիմնական ուշադրությունը նվիրելով իր իշխանության ամրապնդման և դրա իրավական ձևակերպման գործին, պետության և նրա սահմանների ամրապնդմանը։

Ըստ Գ. Կնաբեի, «Նոր ընդարձակ նվաճումներից հրաժարվելու քաղաքականությունը պայմանավորված էր օբյեկտիվորեն. նորանոր ստրուկների ու հարստությունների զավթումը դադարել էր հռոմեական էկոնոմիկայի զարգացման պայմանը լինելուց, կայսրությունը հասել էր առավելագույն չափերին և նրա հետագա ընդարձակումը կարող էր արդեն անհամատեղելի դառնալ միասնական կենտրոնից ղեկավարման սկզբունքի հետ, նվաճումների աճը ենթադրում էր բանակի ուժեղացում և աճ, ինչին կայսրությունը կարող էր և չդիմանալ թե՛ տնտեսապես, թե՛ քաղաքականապես. հռոմեական և արտահռոմեական աշխարհների միջև հաստատվել էր ուժերի այն հավասարակշռությունը, որը խախտելն աննպատակահարմար էր և, ինչպես ցույց տվեց Տրայանոսի պարթևական արշավանքը, ծայրաստիճան վտանգավոր»[3]։

Պրինցիպատի պաշտոնական կարգախոսներ հռչակվեցին խաղաղությունը, ազատությունը, բարօրությունը։ Սա նշանակում էր նոր կայսերական քաղաքականության անցում, սակայն բոլորովին էլ չէր նշանակում հրաժարում ակտիվ արտաքին քաղաքականությունից. հրաժարվելով Հայաստանը և

---

2 Ռ. Լ. Մանասերյան, Տիգրան Մեծ, Երևան, 1937, էջ 214—216։

3 История древнего мира (Под ред. И. М. Дьяконова, В. Д. Нероновой, И. С. Свенцицкой), кн. 3, М., 1982, с. 83.

Պարթևստանը նվաճելուց, Առաջավոր Ասիայի իր տիրույթների անվտանգությունն ապահովելու հարցում Հռոմը շեշտը դրեց դիվանագիտության վրա։

Պրինցիպատի քաղաքական համակարգի հաստատմանը հաջորդած առաջին երկու տասնամյակները բարեհաջող էին Հռոմի արևելյան քաղաքականության համար։ Օգտագործելով Պարթևստանում Հրահատ IV-ի և Տրդատ II-ի միջև ընթացող ներքաղաքական պայքարը, Հռոմը պատերազմ սկսելու սպառնալիքով ռազմացույց անցկացրեց սահմանի վրա և դրանով Պարթևստանին հարկադրեց վերադարձնել Կրասոսի և Անտոնիոսի լեգեոնների գրավված հռոմեական դրոշներն ու ռազմագերիներին[4]։ Մ. թ. ա. 20 թ. Հռոմի և Պարթևստանի միջև կնքվեց պայմանագիր[5] և հաստատվեց տևական խաղաղություն։ Պայմանագրի կնքումով Հռոմը չեզոքացրեց պարթևական վտանգը, սակայն Արևելքում հռոմեական քաղաքականության լիակատար հաջողության համար անհրաժեշտ էր նաև Հռոմի անհաշտ հակառակորդ և անկախ տիրակալ Արտաշես II-ի փոխարեն Հայաստանի գահին դրածո հաստատել, դրանով Հայաստանը դարձնել կախյալ թագավորություն, այն ներքաշելով Հռոմի ազդեցության ոլորտը։

Թեև աղբյուրներում ուղղակի հիշատակություններ չկան այն մասին, որ հռոմա-պարթևական պայմանագիրը վերաբերում էր նաև Հայաստանին, անկասկած է, որ այն ներառել է նաև այս հարցը։ Պետք է կարծել, որ Պարթևստանը, տեղի տալով Հռոմի ճնշմանը և նրա հետ կնքելով պայմանագիր, պարտավորվել էր նաև ռազմական օգնություն ցույց չտալ Հայաստանին՝ նրա գահակալության հարցում Հռոմի միջամտության դեպքում։ Իրադարձությունների հետագա ընթացքը հաստատում է մեր այս ենթադրության ճշմարտացիությունը։

Հռոմի ռազմադիվանագիտական ճնշման ներքո Արտաշես II-ը զոհ դնաց դավադրության և հռոմեական լեգեոններով երկիր ներխուժած Տիբերիոս Ներոնը հայոց արքա թագադրեց սպանվածի եղբորը՝ Տիգրան III-ին[6]։ Արևելքում դիվանագիտական այս հաջողություններից հետո Օգոստոսը սենատին հայտնեց իր կարծիքը՝ հռոմեական տերության սահմանների հետագա ընդարձակման աննպատակահարմարության մասին[7]։ Պարթևական և հայկական հարցերի բարեհաջող լուծումը Օգոստոսին հնարավորություն տվեց հռոմեական պրովինցիաների վերածել Գալաթիայի, Պիսիդիայի, Իսավրիայի և Արևմտյան Լիկաոնիայի կախյալ թագավորությունները[8]։

Այսպիսով, արդեն Օգոստոսի կառավարման առաջին տարիներին ուրվագծվեցին Հռոմի արևելյան քաղաքականության հիմնական ստրատեգիական նպատակները. 1. արդեն նվաճված կամ էլ իր գերիշխանության տակ ընկած Փոքր Ասիայի և այլ ժողովուրդների վրա հռոմեական տիրապետության ամրապնդումը և պաշտպանությունը։ 2. Հռոմի արևելյան տիրույթների նկատմամբ Պարթևստանի հնարավոր ոտնձգության վտանգի կանխարգելում՝ վերջինիս քաղաքականապես թուլացնելու միջոցով։ 3. Հայաստանի վրա հռոմեական գերիշխանության հաստատում, թույլ չտալու նրա դաշինքը Պարթևստանի հետ. Հայաստանի վերածումը հյուսիսից և արևելքից հռոմեական տիրույթները պաշտպանող վահանի, դրանով իսկ Պարթևստանի համար մշտական սպառնալիք ստեղծելով։

Վերջին խնդիրը Հռոմի համար առաջնահերթ նշանակություն ուներ, քանզի դրա լուծումից էր ամբողջապես կախված մյուս երկու խնդիրների իրականացման հնարավորությունը։ Հայաստանը, այսպիսով, իր կարևոր ստրա-

---

[4] Cassius Dio. Historiae Romani, LV, 9 4—5 Velleius Paterculus, Historiae Romana, II. 94

[5] P. Orosius, Historiae Adversum Pagaros, VI, 21, 29.

[6] Cassius Dio. LIV, 9, 3-4.

[7] Cambridge Ancient History (CAH), Cambridge—Mass., vol. X, 1934, p. 264.

[8] Strabo. Geographica, XII, 5, 37; Cass. Dio, LI, 18, 3.

տեղական դիրքով, պաշտպանունակությամբ և տնտեսական նշանակությամբ պրինցիպատի կազմավորման շրջանում կրկին վերածվեց Հռոմի արևելյան քաղաքականության հիմնական օբյեկտի։ Ամբողջ այս ժամանակաշրջանի համար Օգոստոսից մինչև Ներոն, Հռոմի արևելյան քաղաքականության հիմնական ստրատեգիական նպատակները մնացին անփոփոխ։ Փոխվում էին լոկ այդ քաղաքականության անցկացման ձևերն ու մեթոդները՝ կախված Հայաստանում տիրող քաղաքական իրավիճակից և Պարթևստանի ռազմական դիմակայությունից։ Հռոմը Հայաստանում գործում էր Արտաշիսյան հարստության՝ իրեն հարմար ներկայացուցիչներից մեկին պարտադրելու մեթոդով։

Հռոմի արևելյան քաղաքականության առաջին փուլում Հայաստանում իշխեցին Արտաշիսյան հարստության վերջին ներկայացուցիչները՝ Տիգրան III-ը, Արտավազդ III-ը, Տիգրան IV-ը։ Արտաշիսյան վերջին գահակալ Տիգրան IV-ը 1 թ. ընկավ Հայաստան ներխուժած «լեռնական» ցեղերի դեմ մարտում, և Արտաշիսյան հարստությունը հանգավ[9]։ Նրա գահակից քույրը՝ Էրատոն, հրաժարվեց իշխանությունից։

Հայաստանում Արտաշիսյան հարստության անկումով քաղաքական իրավիճակն Առաջավոր Ասիայում ծայր աստիճան սրվեց։ Հռոմը, որը մեծ դժվարությամբ էր Հայաստանը պահում իր ազդեցության ոլորտում (իշխող հարստության մի ներկայացուցչին մյուսով փոխարինելու միջոցով), ստիպված էր իր քաղաքականության անցկացման նոր ուղիներ որոնել։

Արտաշիսյան վերջին գահակալ Տիգրան IV-ի մահից, և մ. թ. 2 թ. Պարթևստանի հետ ոպայմանագրային հարաբերությունները վերականգնելուց հետո Օգոստոս կայսեր թոռ Գայոս Կեսարը՝ Հռոմի լիազոր ներկայացուցիչն արևելյան պրովինցիաներում, օկուպացրեց Հայաստանը[10]։ Ստանալով Օգոստոսի համաձայնությունը, նա Հայոց գահին հաստատեց հարևան Ատրպատականի արքա Արիոբարզան Մարին։ Այս իրադարձությունները և Դիոն Կասիոսի հաղորդումը, որ Արիոբարզանը Հայաստանը «ստացավ Օգոստոսից և ծերակույտից»[11] խոսում են այն մասին, որ Հռոմի արևելյան քաղաքականության անցկացման մեթոդների մեջ վճռական փոփոխություններ կատարվեցին, ինչը նշանավորեց սկիզբն այդ քաղաքականության մի նոր փուլի, երբ Հռոմը Հայաստանը համարելով նվաճված երկիր ու անտեսելով հայ հասարակության շահերը, Հայոց գահին էր հաստատում իրեն հարմար տարբեր արքայատների ներկայացուցիչների, որոնք Արտաշիսյանների հետ ազգակցական ինչ-որ կապեր ունենալով հավակնում էին Հայոց դահին։

Հռոմի արևելյան քաղաքականության այս փուլում Հայոց գահին արագորեն իրար հաջորդեցին հռոմեական դրածոներ Արիոբարզանը, Արտավազդ IV-ը և Տիգրան V-ը, ինչը պարզորոշ ապացուցեց Հայաստանը Հռոմի գերիշխանության ոլորտում նման մեթոդներով պահելու անհնարինությունը։ Սրանցից հետո Հայաստանում թագավորեց Էրատոն՝ վերջին Արտաշիսյան արքա Տիգրան IV-ի քույրը, ապա Հայոց գահին փորձում էր հաստատվել Ոնոն I-ը[12], հռոմեական նախկին դրածոն Պարթևստանում, որը գահից զրկվել և վտարվել էր պարթևական նոր արքա Արտավան III-ի կողմից։

Արևելքում իրադարձությունների նման սրընթացությունը պայմանավորված էր ինչպես նրանով, որ Հռոմը զբաղված լինելով արևմուտքում տարբեր ապստամբությունների ճնշմամբ, չէր կարող ակտիվորեն խառնվել արևելյան գործերին, այնպես էլ նրանով, որ արևելքում Հռոմի քաղաքականությանը համառորեն դիմակայում էին որոշակի ուժեր Հայաստանում և Պարթևստանում։ Երբ վերջապես հնարավորություն ստեղծվեց անդրադառնալու

---

9 Հ. Մանանդյան, նշվ. աշխ., էջ 293։

10 Tacitus, Annales, III, 48.

11 Cass. Dio. LV, 10a, 7

12 Tacit. Ann. II, 4.

արևելյան գործերին, Մերձավոր արևելքում ստեղծված քաղաքական իրավիճակը Հռոմին հարկադրեց լուրջ ուղղումներ մտցնել իր արևելյան քաղաքականության իրացման մեթոդներում։

Հայաստանի և Պարթևստանի փաստացի անկախ վիճակը պոտենցիալ սպառնալիք էր Հռոմի արևելյան տիրույթներին։ «Կախյալ թագավորություններ» համակարգը և դրա հետ կապված արևելյան սահմանների պաշտպանությունը կարոտ էին արմատական վերակառուցման։ Կոմագենեն, Կիլիկիան ու Կապադովկիան ղրկվել էին թագավորներից և դրանց հետագա վիճակը սպասում էր կարգավորման։

Կուտակված պրոբլեմների լուծման համար ծերակույտի որոշմամբ մեծ լիազորություններով Արևելք ուղարկվեց Գերմանիկոսը՝ Հռոմի նոր պրինցեպս Տիբերիոսի եղբորորդին[13]։ 18 թ. գալով Ասորիք, Գերմանիկոսը, չնայած բազմաթիվ այլ կարևոր գործերին «իր առաջնահերթ պարտքն էր համարում հնարավորին չափ շուտ հասնել հայերի մոտ»[14]։ Տակիտոսի այս հաղորդումը բավական ճշմարտանման է, իսկ Գերմանիկոսի մտահոգությունը՝ միանգամայն հասկանալի։

Հայաստանի առանձնահատուկ դրության և կարևոր ստրատեգիական նշանակության պայմաններում արևելքում բոլոր մնացյալ պրոբլեմների լուծման հաջողությունը մեծապես կախված էր Հայաստանի գահակալության հարցի ընդունելի լուծման և այստեղ հռոմեական ազդեցությունը վերականգնելու հաջողությունից։ Հաշվի առնելով հայ հասարակության մեծամասնության համակրանքները և տրամագրվածությունը, Գերմանիկոսը 18 թ. Արտաշատում Հայոց արքա թագադրեց պոնտացի արքայազն Զենոնին, որը ստացավ Արտաշես արքայանունը[15]։ Հայաստանում Զենոն-Արտաշեսի (18—34) թագավորությամբ Հռոմի արևելյան քաղաքականությունը թևակոխեց իր հաջորդ փուլը, երբ Հռոմը ստիպված էր փաստորեն ճանաչել Հայաստանի սուվերենությունը՝ գահին ժողովրդի և ավագանու թեկնածուին հաստատելով Հայաստանը Հռոմի ազդեցության ոլորտում պահելու համար։

Հայաստանի գահակալության հաջող լուծումը Գերմանիկոսին հնարավորություն տվեց ընդլայնել Հռոմի տիրույթներն Առաջավոր Ասիայում՝ պրովինցիաների վերածելով Կիլիկիայի մեծ մասը, Կոմագենեի և Կապադովկիայի թագավորությունները, և այդ «բուֆերային» պետությունների վերացմամբ ուղղակի վերահսկողություն հաստատել արևելյան սահմանի վրա։

Այս կախյալ թագավորությունները հռոմեական պրովինցիաների վերածելը թելադրվում էր քաղաքական նկատառումներով։ Այն պայմաններում, երբ Պարթևստանում հաստատվել էր Հռոմի դեմ թշնամաբար տրամադրված Արշակունիների հարստության կրտսեր ճյուղը հանձինս Արտավան III-ի, Կապադովկիան և Կոմագենեն որպես կախյալ թագավորություններ պահպանելը վտանգավոր էր, քանզի դրանց արքաները հեշտությամբ կարող էին դաշնակցել պարթևներին։ Բացի այդ, Հայաստանի վրա հռոմեական ազդեցության վերականգնումով այն դարձել էր պարթևական հնարավոր ոտնձգությունից Հռոմի արևելյան տիրույթները պաշտպանող վահան։

Այսպիսով, հակառակ Տիբերիոս կայսեր օրոք հռոմեական քաղաքականության պաշտպանողականության մասին ընդունված կարծիքի, հենց Տիբերիոսը վճռական փոփոխություններ կատարեց Հռոմի պրովինցիալ քաղաքականության մեջ (ֆինանսների, տնտեսության և վարչական ապարատի կարգավորման նպատակով) և, ինչպես ցույց տվեց ժամանակը, նրա քաղաքականությունը դուրս եկավ ավելի ճկուն ու հեռանկարային, քան Օգոստոսինը։

Անժառանգ Զենոն-Արտաշեսի մահից հետո 34 թ. Պարթևստանն ակտիվորեն ներգրավվեց Հայաստանի գահակալության հարցի լուծմանը։ Իր տևա-

[13] E. Koestermann. Die Mission des Germanicus im Orient. (Historia, V. 7, 1958, p. 334).

[14] Tacit. Ann., II, 55.

[15] Նույն տեղում, 56։

կան թագավորության ընթացքում Արտավան III-ն ամրապնդելով իշխանությունը և զգալիորեն կենտրոնացնելով պետությունը, անցավ ագրեսիվ արտաքին քաղաքականության, ձգտելով վերականգնել Աքեմենյան տերության նախկին սահմանները։ Հայաստանի նկատմամբ պարթևական գերիշխանության հաստատումը մասն էր կազմում այդ ագրեսիվ ծրագրի[16]։ Հաշվի չնստելով հայ ժողովրդի և ավագանու մեծ մասի շահերի ու ձգտումների հետ, Արտավան III-ը զորքով ներխուժեց Հայաստան և թափուր գահին հաստատեց իր ավագ որդուն՝ Արշակին[17]։ Հռոմի արևելյան տիրույթներում պարթևական նոր ներխուժման սպառնալիք ստեղծվեց։

Արևելքում իր դիրքերն ամրապնդելու համար Հռոմը գործի դրեց դիվանագիտության փորձված մեթոդները։ Արշակը զոհ գնաց դավադրության։ Իբերիայի և Ալբանիայի ուժերով կազմակերպվեց հակապարթևական կոալիցիա, իսկ բուն Պարթևստանում բորբոքվեց ներքաղաքական պայքար՝ Հռոմի կողմից գահի նոր հավակնորդ առաջադրելով[18]։ Կարճ ժամանակում այս իրադարձությունների հետևանքով Հռոմը հասավ իր մերձավոր նպատակների իրականացմանը։ 37 թ. կնքված պայմանագրով Պարթևստանը հարկադրված էր վերստին Հայաստանը ճանաչել հռոմեական ազդեցության ոլորտ։ Հայաստանի փաստացի կառավարիչ մնաց երկիրը նվաճած Միհրդատ Իբերացին[19]։

Ուսումնասիրողները միակարծիք են, որ Հռոմի նոր կայսր Կալիգուլայի (37—41) կառավարման ընթացքում Հռոմի արևելյան քաղաքականության մեջ տեղի ունեցան լուրջ փոփոխություններ՝ մասնավորապես որոշ պրովինցիաների վերստին վերածումը կախյալ թագավորությունների և Հռոմից կախյալ որոշ արքայիկների գահազրկումը (այդ թվում և Հայաստանի)։ Անտիկ պատմիչները նման փոփոխություններին տրամաբանական բացատրություն չտալով դրանք վերագրում են Կալիգուլայի խելահեղությանը և նրա ատելությանը Տիբերիոսի բոլոր ձեռնարկումներին[20]։ Այս բացատրությունն ընդունում են ժամանակակից շատ հետազոտողներ։ Սակայն աղբյուրների մանրազնին քննությունը թույլ է տալիս եզրակացնել, որ Հռոմի արևելյան քաղաքականությունը մեծ մասամբ պայմանավորվում էր օբյեկտիվ քաղաքական անհրաժեշտությամբ, իսկ կայսեր անձնական համակրությունները դեր էին խաղում լոկ այս կամ այն թեկնածուին պաշտոնի նշանակելիս։

Պարթևական ագրեսիայի ուժեղացումը Տիբերիոսի կառավարման վերջին տարիներին Արևելքում Հռոմի համար զգալի դժվարություններ առաջացրեց։ Մեծ դժվարությամբ և ծախսերի գնով հաջողվեց վերականգնել հռոմեական ազդեցությունը Հայաստանում։ Տիբերիոսի օրոք արևելյան սահմանի վրա հաստատված ուղղակի վերահսկողությունը պահանջում էր Առաջավոր Ասիայում տեղաբաշխված հռոմեական զորական ուժերի քանակական ավելացում, ինչը դժվար իրագործելի էր թե՛ ֆիզիկապես և թե ֆինանսապես։ Բայց անդամ արևելյան սահմանի ուղղակի վերահսկողությունը պարթևական ագրեսիայի ուժեղացման պայմաններում չապահովեց Հռոմի արևելյան տիրույթների անվտանգությունը։ Հայաստանի գահակալության հարցի վերջնականապես լուծված չլինելը Հռոմին նորից ու նորից հարկադրում էր վերսկսել

---

[16] Պրինցիպատի կազմավորման ժամանակաշրջանի ընթացքում Պարթևական տերության արտաքին քաղաքականության մանրամասն վերլուծությունը տե՛ս մեր հոդվածում՝ «Պարթևական տերության քաղաքականությունը Հայաստանի նկատմամբ» (ՀԽՍՀ ԳԱ Լրաբեր հաս. գիտ., 1987, № 8)։

[17] Tacit. Ann., VI, 31; Cassius Dio, LVIII, 26.

[18] Josephus Flavius, Antiquitatae Judicae, XVIII, 97—98; Tacitus, Ann. VI, 31—35.

[19] Suetonius, Gaius. XIV, 3; Jos. Flav., Ant. Jud., XVIII, 100—101; Cass. Dio, LIX, 27, 3.

[20] Tacitus, Annales, XIII, 3; Jos. Flav., Ant. Jud., XVIII, 256.

պայքարը Պարթևստանի հետ՝ երկրում հռոմեական ազդեցությունը պահպանելու համար։ Արտավան III-ի օրոք Պարթևստանի ռազմաքաղաքական ճընշման ուժեղացման պայմաններում հռոմեական պրովինցիաների վերածված նախկին կախյալ թագավորություններում պարթևները լուրջ օժանդակություն պիտան հռոմեական տիրապետությունից դժգոհ լայն խավերի շրջանում։ Այսպիսով, Տիբերիոսի օրոք Հռոմի արևելյան քաղաքականության մեջ տեղի ունեցած փոփոխությունները կատարված էին պահի անհրաժեշտությամբ, սակայն փոփոխված քաղաքական հանգամանքներում զգալիորեն թուլացնում էին Առաջավոր Ասիայում Հռոմի դիրքերը։ Զգալի թվով կախյալ թագավորությունների վերածումը հռոմեական պրովինցիաների՝ վաղաժամ դուրս եկավ, քանզի դեռևս չէին ձևավորվել սոցիալ-տնտեսական համապատասխան պայմաններ՝ դրանք կայսրության կազմի մեջ հիմնավորապես ներառելու համար։

Ասվածը թույլ է տալիս պնդելու, որ Հռոմի արևելյան քաղաքականության մեջ Կալիգուլայի օրոք տեղ գտած փոփոխություններն ընդհանուր առմամբ թելադրվում էին արևելյան սահմանում ստեղծված օբյեկտիվ իրավիճակով, և այդ սահմանների պաշտպանության համար կախյալ թագավորությունների համակարգի վերականգնումը բխում էր քաղաքական անհրաժեշտությունից։ Կալիգուլան վերականգնեց Կոմագենեի թագավորությունը և գահին հաստատեց տեղական արքայատան ներկայացուցիչ Անտիոքոսին։ Պաղեստինի արևելյան մասը թագավորության վերածվեց և հանձնվեց Հերովդես-Ադրիպպային։ Պոնտոսի թագավորությունը տրվեց Պոլեմոն II-ին։ Պոլեմոն I-ի մյուս թոռը՝ Կոտիսը (Զենոն-Արտաշեսի քրոջ որդին) ստացավ Փոքր Հայքի գահը։ Իտուրեայի արքա նշանակվեց Սոհեմոսը[21]։

Այսօրինակ քաղաքականության պատճառներն այնքան օբյեկտիվ էին, որ Կալիգուլայի հաջորդ Կլավդիոսը, ըստ աղբյուրների վկայության, հարկ չհամարեց փոփոխել արևելյան սահմանների պաշտպանության այս համակարգը, պահպանելով և վերականգնելով կախյալ թագավորությունները։

Հռոմի արևելյան քաղաքականության այս ընդհանուր գծից չէր շեղվում նաև Կալիգուլայի քաղաքականությունը Հայաստանի նկատմամբ։ Այն ևս թելադրված էր մեծանգամայն օբյեկտիվ պատճառներով։

Հռոմի և Պարսկաստանի միջև 37 թ. կնքված պայմանագրի հետևանքով Հայաստանից տիրացած Հռոմի դաշնակից Միհրդատ Իբերացին մնացել էր երկրի փաստացի կառավարիչը։ Նա 40 թ. Կալիգուլայի կողմից կանչվեց Հռոմ և աքսորվեց[22]։ Դրա պատճառը պետք է համարել Միհրդատի, որպես Հռոմեական դրածոյի, ժողովրդականություն չվայելելը հայ հասարակության շրջանում։ Նման իրավիճակը, երբ երկրին պարտադրված տիրակալի դեմ ցանկացած պահի կարող էր բացահայտ ապստամբություն սկսվել, չէր կարող բավարարել հռոմեական կառավարությանը, որը շահագրգռված էր Հայաստանը իր գերիշխանության ոլորտում պահելու։ Հավանաբար, նպատակ ունենալով սիրաշահել հայ հասարակության հայրենասիրաբար տրամադրված մեծամասնությանը և այդպիսով Հայաստանը պահել հռոմեական ազդեցության ոլորտում, Կալիգուլան գահընկեց արեց Միհրդատին։ Բացառված չէ, որ Միհրդատի շնորհազրկման պատճառ կարող էր լինել նրա հայ «հպատակների» բողոքը[23]։ Անգամ անհավատարմության մասին չստուգված մատնության հիման վրա Կալիգուլան գահընկեց էր անում ենթակա արքանե-

---

[21] Suet., Gaius, XVI, 3; Jos. Flav., Ant. Jud. XVIII, 7, 2; Cass. Dio, LIX, 12, 2; Tacit., Ann. XII, 23.

[22] Tacit., Ann., XI, 8; Cass. Dio. LX. 8.

[23] Նման պրակտիկայի գոյության մասին է վկայում այն փաստը, որ իր իսկ հպատակների կողմից մեղադրված Կապադովկիայի արքա Արքելայոսը գահընկեց արվեց՝ (Cass. Dio, LVII, 17. 3).

ին[24] Սվետոնիուսը հաղորդում է Կլավդիոս կայսեր մոտ եկած հայերի պատգամավորության մասին, որը խնդրում էր իբերացիների հեռացումը Հայաստանից[25]։ Միանգամայն հավանական է, որ նման մի պատգամավորություն էլ գնացած լիներ Կալիգուլայի մոտ՝ Միհրդատի հեռացումը խնդրելու։

Կալիգուլայի սպանությունը (41 թ. սկիզբ) հնարավորություն չտվեց լուծել Հայաստանի գահակալության խնդիրը։ Որ Հայոց գահին Կալիգուլան պետք է հայ հասարակության համար ընդունելի թեկնածու հաստատեր, կարելի է չկասկածել. Կալիգուլան ամեն կերպ ընդգծում էր իր հոր գործունեությունը հօգուտ պետության բարօրության և հարգում էր նրա հիշատակը[26], ուստի Հայաստանի գահակալության խնդրի լուծման հարցում ևս նա պետք է որ հետևեր Գերմանիկոսի օրինակին՝ Հայոց գահին հաստատելով Հռոմի նկատմամբ բարեկամաբար տրամադրված և հայ հասարակության կողմից ընդունելի թեկնածուի։ Դա նորից կնշանակեր Հայաստանի սուվերենության ճանաչումը Հռոմի գերիշխանության ներքո։ Անուղղակիորեն նման ենթադրությունը հաստատում է այն փաստը, որ Գերմանիկոսի կողմից Զենոն-Արտաշեսի թագադրությունը պատկերող հոբելյանական դրամները հատվել են Կալիգուլայի իշխանության տարիներին[27]։ Հայոց գահի հավանական թեկնածու կարելի է համարել Փոքր Հայքի արքա Կոտիսին՝ Զենոն-Արտաշեսի քրոջ որդուն, որը ելնելով ազգակցական կապերից և պատմական նախադեպից, ընդունելի կլիներ հայ հասարակության համար։

Այսպիսով, վերն ասվածի հիման վրա կարելի է պնդել, որ Հայաստանի նկատմամբ Կալիգուլայի կառավարման տարիներին էլ շարունակվում էր արևելյան քաղաքականության այն փուլը, երբ Հռոմը ստիպված էր փաստորեն ճանաչել Հայաստանի սուվերենությունը՝ գահին ժողովրդի և ավագանու թեկնածուին հաստատելով, Հայաստանը գերիշխանության ոլորտում պահելու համար։

Վերացնելով Կալիգուլայի քաղաքականության վտանգավոր ծայրահեղությունները և ամրապնդելով հռոմեական իշխանությունն արևելյան պրովինցիաներում, Կլավդիոսը փորձեց Հայաստանի գահակալության հարցը լուծել ելնելով զուտ հռոմեական շահերից։

Միհրդատ Իբերացին 43 թ. վերադարձվեց աքսորից և ուղարկվեց Հայաստան։ Հռոմեական ու իբերական զորքերի օգնությամբ կոտրելով հայ ժողովրդի դիմադրությունը և հակառակ նրա ցանկության, Միհրդատը, հաստատվեց Հայոց գահին, իսկ երկրում տեղակայվեցին հռոմեական զորամասեր[28]։

Այս իրադարձությունները նշանակում էին Հռոմի արևելյան քաղաքականության անցումը նոր փուլի, երբ Հռոմը Պարթևստանի ագրեսիվ քաղաքականության և պարթևական հնարավոր ոտնձգության պայմաններում Հայաստանն իր գերիշխանության ներքո էր պահում Իբերիայի թագավորի օժանդակությամբ՝ նրա ազգականին որպես իր դրածո Հայոց գահին հաստատելով և երկրի ստրատեգիական կետերում հռոմեական զորամասեր տեղաբաշխելով։

Հայոց գահին Միհրդատ Իբերացու վերահաստատվելը Անդրկովկասի ժողովուրդների միջև թշնամանք սերմանելով պետք է հեշտացներ Հռոմի գերիշխանության պահպանումը Հայաստանում։ Դեպքերին ժամանակակից հռոմեացի պատմիչը ծայրահեղ պարզությամբ մերկացնում է Հռոմի այդ օրինակ

---

[24] Նման մի մատնությամբ իշխանությունից զրկվեց տետրարքոս Հերովդես Անտիպասը (Jos. Flav., Ant. Iud. XVIII. 7, 2).

[25] Suet., Claudius, XXV.

[26] CAH, vol. X, p. 665.

[27] V. Ehrenberg, A. H. M. Jones, Documents illustrating the reigns of Augustus & Tiberius, Oxford, 1949, p. 103, n. 182; C. H. V. Sutherland, Coinage in Roman Imperial policy, 31 B. C.—A. D. 68, London, 1951, p. 108.

[28] Tacit., Ann., XI, 8–9.

քաղաքականության էությունը, գրելով. «Անհրաժեշտ է երկպառակությունները սերմանել, ինչպես հաճախ արել են հռոմեական պրինցեպսները, մեկին կամ մյուսին առատաձեռն նվերի ձևով տալով Հայաստանը, որպեսզի բորբոքեն բարբարոսների հոգիները և դրդեն նրանց խառնակության»[29]։

Միհրդատ Իբերացուն ճանաչելով Հայոց արքա. Հռոմը կարող էր հուսալ, որ Հայաստանին տիրանալու Պարթևստանի նոր փորձերի դեպքում, Իբերիայի արքան գործուն օժանդակություն ցույց կտա Հայաստանում թագավորող իր եղբորը՝ ընդդեմ երկուսին էլ սպառնացող պարթևական վտանգի[30]։ Միաժամանակ, բռնի ուժով պարտադրված օտար տիրակալի դեմ հայ հասարակության մեծամասնության թշնամությունն էապես կթուլացներ վերջինիս դիրքերը, հարկադրելով մշտապես զգալ հռոմեական օժանդակության կարիքը, դրանով իսկ Հայաստանը պահպանելով հռոմեական գերիշխանության ոլորտում։ Սրանում պետք է տեսնել պատճառն այն բանի, որ Հռոմը լրջորեն չարձագանքեց 52 թ. Միհրդատ Իբերացու սպանությանը նրա եղբորորդի Հռադամիզդի կողմից և փաստորեն պաշտոնապես ճանաչեց վերջինիս Հայոց արքա թագադրվելը[31]։ Այսպիսով, Հռոմի արևելյան քաղաքականության այս վերջին փուլը շարունակվեց նաև Հայաստանում Հռադամիզդի (52—54) կառավարման ընթացքում, այսինքն մինչև Կլավդիոսի կառավարման վերջը։

Այս իրադարձությունների հետ գրեթե միաժամանակ Պարթևստանում տեղի ունեցան քաղաքական փոփոխություններ, որոնց հետևանքները բախտորոշ նշանակություն ունեցան Հայաստանի հետագա ճակատագրի համար։ Երբ Պարթևական նոր տիրակալ Վաղարշ I-ը Հայոց գահի հավակնորդ առաջադրեց իր եղբորը՝ Տրդատ I Արշակունուն, այսուհետ Հայաստանը ճանաչելով որպես անկախ թագավորություն, հայ հասարակության մեծամասնությունը վերջինիս գերադասեց հռոմեական դրածո Հռադամիզդից։

Հայ ժողովրդի հայրենասիրաբար տրամադրված մեծամասնության չդադարող անձնազոհ պայքարի շնորհիվ Հայաստանն ազատվեց հռոմեական գերիշխանությունից և վերականգնեց իր պետական անկախությունը, որը շուտով ճանաչվեց երկու տերությունների կողմից։

Այսպիսով, աղբյուրների հաղորդումների քննությունը և պատմական իրադարձությունների համադրումը մեզ բերում է այն եզրակացության, որ պրինցիպատի կազմավորման շրջանում Հռոմի արևելյան քաղաքականության մեջ տեղի ունեցած փոփոխությունները որոշակիորեն պայմանավորված էին նաև իր ազատության համար հայ ժողովրդի մղած պայքարով։ Պրինցիպատի կազմավորման շրջանում Հռոմի արևելյան քաղաքականության ստրատեգիական նպատակների անփոփոխության պայմաններում ներքին և արտաքին հանգամանքների ազդեցությամբ այդ քաղաքականության անցկացման տակտիկական ձևերն ու մեթոդները փոփոխվում էին։ Վերը կատարված քննության հիման վրա Հայաստանի նկատմամբ Հռոմի վարած քաղաքականությունն ըստ նրա անցկացման ձևերի ու մեթոդների կարելի է բաժանել հետևյալ փուլերի. 1-ին փուլ՝ մ. թ. ա. 20 թ.—1 թ.—Հռոմը իր գերիշխանությունը Հայաստանում պահպանում էր Հայոց գահին իշխող Արտաշիսյան հարստության հռոմեական դաստիարակություն ստացած ներկայացուցիչներ հաստատելու միջոցով։ 2-րդ փուլ՝ 2—17 թթ.—Հայաստանը համարելով արդեն նվաճված երկիր, Հռոմը Հայոց գահին էր հաստատում իրեն նվիրված տարբեր արքայատների ներկայացուցիչների, որոնք Արտաշիսյանների հետ ազգակցական կապեր ունեին։ 3-րդ փուլ՝ 18—43 թթ.—Հայաստանն իր ազդեցության ոլորտում պահելու համար Հռոմը ստիպված էր փաս-

---

29 Նույն տեղում, XII, 48։

30 Նման օգնություն Միհրդատին նրա եղբայրը՝ Իբերիայի արքա Փարասմանը արդեն իսկ ցույց էր տվել 35 թ.։

31 Tacit., Ann, XII, 46—49.

տորեն ճանաչել նրա սուվերենությունը՝ գահին հայ հասարակության թեկնածուի հաստատելու միջոցով։ 4-րդ փուլ՝ 43—54 թթ.—Հռոմը Պարթևստանի տիրակալների շարունակվող ագրեսիվ քաղաքականության և իր տիրույթների նկատմամբ։ Պարթևական հնարավոր ոտնձգության պայմաններում Հայաստանը իր գերիշխանության ներքո էր պահում Իբերիայի կառավարողների օգնությամբ և երկրի ստրատեգիական կետերում հռոմեական զորամասեր տեղադրելով։

ПОЛИТИКА РИМА В АРМЕНИИ В ПЕРИОД СТАНОВЛЕНИЯ ПРИНЦИПАТА

(опыт периодизации)

А. Э. ХАЧИКЯН

Резюме

Основные стратегические цели восточной политики Рима в период становления принципата наметились уже в начале правления Августа и оставались неизменными в течение всего периода. При этом в зависимости от внутренних и внешних обстоятельств изменялись тактические формы и методы ее проведения. На основании этих изменений политику Рима по отношению к Армении условно можно разделить на следующие этапы:

I этап (20 г. до н. э.—I г.)—Рим навязывал стране удобного для себя претендента на царский престол из числа представителей правящей династии Арташесянов:

II этап (2—17 гг.)— рассматривая Армению как покоренную страну и игнорируя ее интересы и стремления, Рим назначал ее царями угодных себе кандидатов из восточных принцев или правителей, имевших отдаленное родство с Арташесянами;

III этап (18—43 гг.)—Рим был вынужден признать суверенитет Армении, утверждая на престол кандидата армян, для сохранения страны в сфере своего влияния;

IV этап (43—54 гг.)—Рим, при агрессивном внешнеполитическом курсе Парфии и ее возможной экспансии, удерживал Армению под своим протекторатом при помощи правителей Иберии, разместив в стране гарнизоны своих войск.

POLICY OF ROME IN ARMENIA DURING THE FORMATION OF PRINCIPATE

(periodization experiment)

A. E. KHACHIKIAN

Summary

The main strategic aims of oriental policy of Rome during the formation of principate were observed already at the beginning of Augustus' government and stayed unchangeable in the course of the whole period. By this, in dependence of inner and outer circumstances tactical forms and methods of its contact were changed. In virtue of these changes the policy of Rome as regards Armenia conditionally can be divided into following stages:

I stage (20 B. C.—1)—Rome forced upon the country convenient for him claiment to the king's throne from the representatives of the governing of Arlashesian dynasty;

II stage (2—17)—considering Armenia a submitting country ignoring its interests and aspirations, Rome appointed its kings from the candidates, from oriental princes or governers, who pleased them and had remote relationship with Artashesians;

III stage (18—43)—Rome had to recognize sovereignty of Armenia, confirming to the throne the Armenians' candidate for preserving the country in the sphere of his influence;

IV stage (43—54)—Rome with the aggressive foreign policy of Parti and her possible expansion, kept Armenia under its protectorate with the help of Iberia, billetting the garnisons of their forces in the country.